ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 26.11/ 481
26.11.2014 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գ.Կոստանյանին

Պատճենը՝
Հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն Կոստանյան,

2014 նոյեմբերի 21-ին իր իրավունքների պաշտպանության համար Կազմակերպություն[1] են դիմել Վանաձոր քաղաքի Աբովյան 28 հասցեի բնակիչները՝ Անի Հակոբի Բոշյանը, նրա հայրը՝ Հակոբ Հովհաննեսի Բոշյանը, և մայրը՝ Բավական Սեդրակի Խաչատրյանը:

Քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրը վերաբերում է ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժնի աշխատակիցների կողմից Կազմակերպություն դիմած անձանց նկատմամբ դրսևորած ապօրինություններին, որը հասցրել է Անի Բոշյանի ինքնասպանության փորձին:

Ա. Կազմակերպությանը ներկայացված դիմումով Հակոբ Բոշյանը հայտնել է, որ 2014 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում իրենց տուն են այցելել ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժանմունքի 4 աշխատակիցներ՝ բնակարանի խուզարկություն իրականացնելու նպատակով: Վերջիններս հայտնել են, որ ցանկանում են զրուցել վերջինիս աղջկա՝ Անի Բոշյանի հետ և քանի որ վերջինս գտնվել է Երևան քաղաքում, Հ. Բոշյանին նույն օրը ժամը 11:20-ի սահմաններում իրենց հետ տարել են Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին: Ոստիկանության բաժանմունքում թվով 5 ոստիկաններ Հ. Բոշյանին սկսել են սեռական բնույթի հայհոյանքներ տալ և սպառնացել են, որ եթե իրենց չհայտնի Ա. Բոշյանի գտնվելու վայրը, կծեծեն նրան: Հ. Բոշյանը ոստիկանության բաժանմունքի տվյալ աշխատասենյակում մնացել է մոտավորապես 2 ժամ, որի ընթացքում ոստիկանության աշխատակիցները նվաստացրել են նրան, սպառնալով, որ իրենց կապերի միջոցով վերջինիս կզրկեն նաև աշխատանքից: Տվյալ ժամանակահատվածում Հ. Բոշյանը փորձել է զանգահարել

[1] Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

իր տնօրենին որպեսզի հայտնի, որ չի կարողանում ներկայանալ աշխատանքի, քանի որ ոստիկանները անօրինական իրեն պահում են ոստիկանության բաժանմունքում, սակայն չի կարողացել խոսքը ավարտել, քանի որ ոստիկանության աշխատակիցները հեռախոսը ձեռքից խլել են և թույլ չեն տվել այլ զանգեր կատարել: Երկու ժամ տվյալ աշխատասենյակում մնալուց հետո նրան տեղափոխել են հարակից աշխատասենյակ, որտեղ նա մենակ է եղել: Այնուհետև, ժամը 17:00-ի սահմաններում դիմացի սենյակում նստած ոստիկանության աշխատակիցը ինչ-որ հեռախոսազանգ է ստացել, որից հետո նրան վերադարձրել են բջջային հեռախոսը և ասել են, որ գնա աղջկան վերցնի և գա ոստիկանություն:

Նույն օրը՝ 17:30-ի սահմաններում, Անի Բոշյանը վերադառնում է Երևանից, ոստիկանության աշխատակիցների և ծնողների հետ ներկայանում Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին:

Բ. Կազմակերպությանն ուղղված դիմումում Անի Բոշյանը հայտնում է, որ 2014 թվականի նոյեմբերի 11-ին ոստիկանության աշխատակիցները խուզարկություն իրականացնելու նպատակով այցելել են իրենց տուն, սակայն այդ ժամանակ Ա. Բոշյանը գտնվել է Երևանում և նրա մայրը՝ Բ. Խաչատրյանը զանգահարելով նրան, հայտնել է որ, թողնի բոլոր գործերը և շտապ Վանաձոր գա: Նույն օրը Անի Բոշյանը վերադարձել է Վանաձոր և ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ գնացել է Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին:

Կազմակերպությանն ուղղված դիմումում Ա. Բոշյանը հայտնում է, որ նշված օրը կատարված հարցաքննության ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից վերջինս ենթարկվել է հոգեբանական անտանելի ճնշումների, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Մասնավորապես, ոստիկանության աշխատակիցները դաջվածքներ, վնասվածքներ, թաքցված պարագաներ հայտնաբերելու նպատակով մերկացրել են Ա. Բոշյանին, ստուգել մարմինը, հեռախոսով նկարահանումներ կատարել: Այնուհետև, սկսելով հարցաքննությունը, ծաղրուծանակի, անձնական բնույթի վիրավորանքների, ճնշումների միջոցով ցանկացել են, որ Ա. Բոշյանը խոստովանի, որ կատարել է հանցագործություն: Հարցաքննության ընթացքում, ինչպես իր դիմումում հայտնում է Ա. Բոշյանը, իր մոտ առողջական խնդիրներ են առաջացել, սկսել է շնչահեղձ լինել, ցանկացել է տեսնել ծնողներին, որպեսզի մոր մոտից իրեն անհրաժեշտ դեղերը վերցնի, սակայն ոստիկանության 3 աշխատակիցներ, որոնց անունները Ա. Բոշյանը չի հիշում, միայն արտաքինով կարող է ճանաչել, չեն թույլատրել մորը տեսնել, ծաղրելով, թե՝ «բա եթե հիմա չես կարող առանց մայրիկի, դե քեզ պատկերացրու կանանց գաղութում, որ առանց նրանց ինչ ես անելու»: Ոստիկանության աշխատակիցները հարցաքննության ընթացքում անընդհատ վիրավորել են նրան, կոչելով անբարոյական, անդաստիարակ, չեն բացատրել նրան իր իրավունքները և պարտականությունները, ոստիկանությունում պահել են նոյեմբերի 11-ից ժամը 17:30-ից մինչ նոյեմբերի 12-ը 03:30-ը ընկած ժամանակահատվածը, սպառնացել են նրան, որ կտեղափոխեն հանցագործների մոտ և այլևս ծնողներին չի կարողանա տեսնել:

Տեսնելով, որ այդ կերպ չեն կարողանում ստիպել Ա. Բոշյանին ինքնախոստովանական ցուցմունք գրի, սկսել են համոզել նրան: Ճնշումներին չդիմանալով Ա. Բոշյանը սկսել է իրականությանը չհամապատասխանող ցուցմունք գրել, որը իրեն թելադրել են ոստիկանության աշխատակիցները, որից հետո միայն նրան թույլ են տվել տուն գնա:

Ոստիկանության աշխատակիցները Ա. Բոշյանին վստահեցրել են, որ տվյալ ցուցմունքի մասին ոչ ոք չի իմանա և պետք չի, որ ընտանիքի անդամներին էլ հայտնի դառնա կատարված հարցաքննության արդյունքում տրված ցուցմունքները, որի մասին վերջինս ծնողներին չի հայտնել մինչ 2014թ. նոյեմբերի 20-ը:

Գ. Ըստ Բավական Խաչատրյանի կողմից կազմակերպությանն ուղղված դիմումի՝ 2014 թվականի հուլիսի 1-ին ժամը 10:40-ի սահմաններում նրանց տուն են այցելել Ստեփանավան քաղաքի ոստիկանության աշխատակիցները՝ բնակարանի խուզարկության նպատակով: Խուզարկությունը ավարտելուց հետո հայտնել են, որ Անի Բոշյանը իրենց հետ պետք է գնա Ստեփանավան քաղաքի ոստիկանության բաժին հարցաքննություն իրականացնելու նպատակով: 15:00-ից 16:00-ն ընկած ժամանակահատվածում նրանք ոստիկանության աշխատակիցների հետ միասին մեկնել են Ստեփանավանի քաղաքի ոստիկանութուն, որտեղ որ Ա. Բոշյանին հարցաքննել են մինչ 23:30-ն ընկած ժամանակահատվածը:2014 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում իրենց տուն են այցելել Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժնի 4 աշխատակիցներ՝ բնակարանի խուզարկություն իրականացնելու նպատակով: Նա հայտնել է, որ խուզարկության այցելած ոստիկանության աշխատակիցները, ժամը 11:20-ի սահմաններում ամուսնուն տեղափոխել են ոստիկանության բաժանմունք, այնտեղ պահել մի քանի ժամ, ստիպել, որ Անի Բոշյանի գտնվելու վայրը հայտնի, սեռական բնույթի հայհոյանքներ են տվել նրան, սպառնացել աշխատանքից ազատել: Ներկայացված դիմումով Բ. Խաչատրյանը հայտնել է, որ ամբողջ այն ժամանակահատվածում, որ Ա. Բոշյանը գտնվել է ոստիկանության բաժանմունքում, ինքը նույնպես գտնվել է ոստիկանության բաժանմունքում և լսել է աղջկա լացի ձայները: Փորձելով ճշտել, թե ինչ է կատարվում քննչական սենյակում, բացել է հարցաքննության սենյակի դուռը և տեսել է աղջկան լաց լինելիս, որից հետո անմիջապես Բ. Խաչատրյանին ոստիկանության շենքից դուրս են հանել: Ներկայացված դիմումով Բ. Խաչատրայանը պնդել է, որ Ա. Բոշյանը ոստիկանությունում է գտնվել նոյեմբերի 11-ից ժամը 17:30-ից մինչ նոյեմբերի 12-ը ժամը 03:30-ն ընկած ժամանակահատվածում:

Ա. Խաչատրյանը 2014թ. նոյեմբերի 25-ին կազմակերպություն է ներկայացրել ևս մեկ դիմում այն մասին, որ 2014թ. նոյեմբերի 23-ին ժամը 20:50-ի սահմանում Անի Բոշյանը հասկանալով ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ ճնշումների արդյունքում ձեռք բերված ցուցմունքների լրջությունը, մեծ քանակությամբ դեղամիջոցներ է կուլ տվել ինքնասպանություն կատարելու նպատակով, որը Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցի բժիշկների կողմից կանխվել է: Նոյեմբերի 26-ին Անի Բոշյանը դուրս է գրվել հիվանդանոցից և տեղափոխվել է տուն, սակայն նրա կողմից կատարված ինքնասպանության

փորձի դրդապատճառների ուսումնասիրության հարցով ոստիկանության որևէ աշխատակից մինչ օրս նրան չի այցելել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պատասխանատվությունը իր իրավազորության ներքո գտնվող ոստիկանությունում անձանց կյանքի, ֆիզիկական անձեռնմխելիության և առողջության պահպանությունն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը և նման դեպքերի արդյունավետ քննության պետության պարտականությունը,

ԴԻՄՈՒՄ ԵՄ ՁԵԶ

- ✓ Անի Բոշյանի նկատմամբ խոշտանգումներ կատարելու, ազատությունից անօրինական զրկելու, վերջինիս ինքնասպանության հասցնելու փաստերի առթիվ հարուցել քրեական գործ,
- ✓ Հակոբ Բոշյանի նկատմամբ խոշտանգումներ կատարելու, ազատությունից անօրինական զրկելու փաստի առթիվ հարուցել քրեական գործ,
- ✓ միջոցներ ձեռնարկել մեղավորներին բացահայտելու և հետագայում նման դեպքերի կրկնման հնարավորությունը իսպառ բացառելու ուղղությամբ:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am